

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԻՐՈ ՀՐԱՉԻ

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ՝ ՈՐՊԵՍ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ

ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք՝ քաղաքացիական, առևտրային
(կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային,
սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2025

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АМИРХАНИЯН СИРО ГРАЧОВИЧ

ЮРИДИЧЕСКИЕ ЛИЦА ПУБЛИЧНОГО ПРАВО КАК СУБЪЕКТ
ГРАЖДАНСКОГО ПРАВА

АВТОРЕФЕРАТ

диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.03 - “Частное право - гражданское, торговое
(коммерческое); международное частное, семейное, трудовое право, право
социального обеспечения”

ЕРЕВАН-2025

**Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ա. Մ. Հայկյանց

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյան

իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ա. Ա. Թավադյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի
դեկտեմբերի 19-ին, ժամը 14³⁰-ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական
համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի
նիստում (0025, ք.Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական
համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2025 թվականի նոյեմբերի 18-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ.,**

Ժ. Ա. Ստեփանյան

**Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете**

Научный руководитель:

доктор юрид. наук,
профессор А. М. Айкянц

Официальные оппоненты:

доктор юрид. наук,
профессор В. Д. Аветисян
кандидат юрид. наук,
доцент А. А. Тавадян

Ведущая организация:

Российско-Армянский университет

Защита диссертации состоится 19 декабря 2025 г. в 14³⁰ часов на заседании
Специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском
государственном университете (0025, г.Ереван, ул.Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных
работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 18 ноября 2019 года.

**Ученый секретарь специализированного
совета: кандидат юридических наук**

Ж. А. Степанян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հասարակության զարգացման ներկայիս փուլում, պայմանավորված շուկայական հարաբերություններով, մասնավոր իրավահարաբերությունների և մասնավոր շահերի դիտարկմանը տրվում է մեծ նշանակություն, սակայն դրանց գրեթե համահավասար պետք է կարևորվի և մեծ ուշադրության արժանանա նաև պետության կամ համայնքի, ինչպես նաև նրանց կողմից հիմնադրված իրավաբանական անձանց մասնակցությամբ քաղաքացիական իրավահարաբերությունների ուսումնասիրությունն ու գոյություն ունեցող հիմնահարցերի արդյունավետ լուծումների որոնումը:

ՀՀ Սահմանադրության 180-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել է, որ համայնքը «հանրային իրավունքի իրավաբանական անձ» է: Նույնպիսի իրավական կարգավիճակ է շնորհվել նաև միջհամայնքային միավորմանը համաձայն Սահմանադրության 189-րդ հոդվածի 3-րդ մասի:

Այս կապակցությամբ ՀՀ 2015 թ. խմբագրությամբ սահմանադրության համառոտ պարզաբանումներում արդարացիորեն նշվել է, որ «Սահմանադրությունն առաջին անգամ ներմուծում է միանգամայն նոր եզրույթ, որի նպատակն է հստակեցնել, որ հանրային իշխանության ոլորտում իրավաբանական անձանց կարգավիճակը որոշակիորեն տարբերվում է մասնավոր իրավունքում ընդունված իրավաբանական անձանց կարգավիճակից: Նման կարգավորումը հնարավորություն կտա հետագայում օրենքով զարգացնելու նոր իրավական ինստիտուտի էությունը և նպաստելու, որ հանրային իրավունքում «իրավաբանական անձ» եզրույթը չնույնացվի մասնավոր իրավունքում օգտագործվող նույնանուն իրավական եզրույթին, ինչն անհարկի շփոթի հիմք կարող է լինել»:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ ՀՀ օրենսդրությունը դե ֆակտո ճանաչում է հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիան որպես իրավաբանական անձի տեսակ: Սակայն, թե ի՞նչ է իրենից ներկայացնում հանրային իրավունքի իրավաբանական անձը, ինչպե՞ս է փոխհարաբերվում մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց հետ, արդյոք հանրային իրավունքի իրավաբանական անձինք ընդամենը երկուսն են, թե՞ առնվազն երկուսն են, Սահմանադրությունը չի բովանդակում այս հարցերի պատասխանները և կարծում ենք՝ նման հարցերի կարգավորումը Սահմանադրության շրջանակներում ինքնին կլինե՞ր առարկայագուրկ: Սակայն, պետք է պնդել, որ վերը նշված հարցերի պատասխանները պետք է արտացոլվեն ՀՀ օրենսդրության, ինչպես նաև գիտական գրականության մեջ:

Հարկ է նշել, որ մինչև ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունները, ՀՀ իրավական համակարգում շրջանառության մեջ էր գտնվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ՝ իրավաբանական անձանց,

վերաբերող գլխում փոփոխություններ կատարելու մասին հայեցակարգը, որտեղ նշված է, որ քաղաքացիական օրենսդրության կատարելագործմանը կնպաստի իրավաբանական անձանց՝ հանրայինի և մասնավորի դասակարգումը: Նշված հայեցակարգում նախատեսված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում հանրային իրավունքի իրավաբանական անձանց որպես նոր կատեգորիա հավուր պատշաճի ամրագրելու նպատակն իրագործելու համար մշակվել էր «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի» նախագիծը:

Սակայն ներկայումս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ՝ իրավաբանական անձանց, վերաբերող գլխում փոփոխություններ կատարելու մասին հայեցակարգը և դրա հիման վրա «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի» նախագիծը հանվել են շրջանառությունից, քանի որ թեև հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց տարանջատման անհրաժեշտությունը բխում է ՀՀ սահմանադրաիրավական կարգավորումներից և միջազգային պրակտիկայից, սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների վերը նշված հայեցակարգում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծում ամբողջ ծավալով չեն բացահայտվել հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց տարանջատման անհրաժեշտությունը, հանրային իրավունքի իրավաբանական անձանց բնորոշ գծերը և տեսակները և դրանով պայմանավորված՝ հանրային իրավունքի իրավաբանական անձանց առանձնահատկությունները: Չնայած օրենսդրական մեխանիզմների սակավությամբ ու դրանց գործունեության ներկայիս տարերայնությամբ պայմանավորված լայնածավալ ուսումնասիրությունների անհրաժեշտությանը, այդուհանդերձ, հանրային իրավունքի իրավաբանական անձանց՝ որպես քաղաքացիական իրավահարաբերության առանձնահատուկ սուբյեկտների գործունեությունը և դրա կապակցությամբ առաջացող հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում լիարժեքորեն բացահայտված և լուսաբանված չեն նաև տեսական մակարդակով՝ պայմանավորված այս ոլորտում կատարված ուսումնասիրությունների խիստ սակավությամբ: Արդյունքում, մեր գնահատմամբ, ՀՀ սահմանադրական փոփոխությունների համատեքստում հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց դե յուրե տարանջատման հիմնահարցը բարձրացել է նոր մակարդակի, որի պատճառով անխուսափելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, ինչպես նաև մի շարք այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը, որի տեսական հիմնավորմանն է ուղղված սույն աշխատանքը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Հանրային իրավունքի իրավաբանական անձանց և վերջիններիս մասնակցությամբ իրավահարաբերությունների ինստիտուտի վերաբերյալ

տեսական խորը և համապարփակ ուսումնասիրությունները հայկական իրականության մեջ գրեթե բացակայում են, իսկ հայրենական մի շարք հեղինակներ իրենց աշխատություններում անդրադարձել և վերլուծել են քննարկվող կազմակերպությունների և իրավահարաբերությունների առանձին դրսևորումներին վերաբերող որոշ հիմնահարցեր: Դրանցից կարելի է առանձնացնել Վ. Դ. Ավետիսյանի, Գ. Ա. Պողոսյանի աշխատությունները, որոնք սակայն ամբողջությամբ հանրային իրավունքի իրավաբանական անձանց ինքնին չեն վերաբերում: Հանրային իրավունքի իրավաբանական անձանց և վերջիններիս մասնակցությամբ իրավահարաբերություններին վերաբերող հարցերը հետազոտության են ենթարկվել ինչպես արևմտյան, այնպես էլ հետխորհրդային մի շարք երկրների (Գերմանիա, Ֆրանսիա, Իսպանիա, Վենեսուելա, Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան և այլն) գիտական աշխատություններում: Դրանց շարքում կարելի է առանձնացնել Գ. Շերշենիչի, Գ. Ֆեռնանդոյի, Ե. Սուլխանովի, Ե. Տալպինայի, Զ. Բ. Աուբիի, Զ. Բ. Էլիոթի, Պ. Բուլլի, Պ. Սենդուուտի, Ս. Բրատուսի, Վ. Զիդկինի, Վ. Ռուդակովայի, Մ. Բրազինսկու, Մ. Կուլագինի, Մ. Զենկովի, Ն. Կոզլովայի, Օ. Յաստրեբովի և այլոց աշխատությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասնակցությամբ քաղաքացիաիրավական հարաբերությունները, իսկ առարկան՝ սույն աշխատանքի նպատակներին և խնդիրներին համահունչ հանրային իրավունքի իրավաբանական անձանց և վերջիններիս մասնակցությամբ իրավահարաբերությունների իրավական կարգավորման առկա հիմնախնդիրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը ՀՀ-ում հանրային իրավունքի իրավաբանական անձանց համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, տեսական և գործնական հիմնախնդիրների վերհանումը, շրջանառության մեջ տեսական նոր դրույթների, տերմինների և պատկերացումների ներդրումը, կատարված համալիր հետազոտության արդյունքների հիման վրա հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասնակցությամբ իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության բացերի լրացումը, առկա կարգավորումների կատարելագործումը, ինչպես նաև նշված իրավահարաբերությունների մասնակիցների և շահառուների իրավունքների իրացման ու պաշտպանության մեխանիզմների ամրապնդմանն ու զարգացմանն ուղղված առաջարկների մշակումը:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար խնդիր է դրվել.

1. բացահայտել հանրային իրավունքի իրավաբանական անձանց՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտի բնույթը, էությունը, վերջիններիս բնորոշ տարբերակիչ գծերը, և այդպիսով՝

2. հիմնավորել հանրային և մասնավոր իրավունք իրավաբանական անձանց տարանջատման անհրաժեշտությունը,
3. ուսումնասիրել և գտնել հանրային իրավունքի իրավաբանական անձանց հատկանիշների հստակեցման և սահմանման չափանիշները, սահմանել հանրային իրավունքի իրավաբանական անձի հասկացությունը,
4. ուսումնասիրության առարկա դարձնել հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակների հստակեցման ու քաղաքացիական իրավասուրբեկտության վերաբերյալ հիմնահարցերը,
5. վերլուծել հանրային իրավունքի իրավաբանական անձանց քաղաքացիաիրավական իրավասուրբեկտությունը, հատկապես պատասխանատվությանն առնչվող հիմնահարցերը՝ հիմքում ունենալով վերաբերելի ՀՀ և արտասահմանյան պետությունների, ներառյալ Գերմանիայի, Բրազիլիայի, Մոլդովայի, Վրաստանի օրենսդրական իրավակարգավորումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական, ՀՀ սահմանադրական դատարանների որոշումները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը:

Հետազոտության նորմատիվային հենքը կազմել են հայաստանյան և արտասահմանյան պետությունների օրենքները, միջազգային իրավական փաստաթղթերը: Աշխատանքի իրավական և փորձառական հիմք են հանդիսացել նաև արտասահմանյան երկրների նորմատիվ իրավական ակտեր, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ վճռաբեկ, Սահմանադրական, ինչպես նաև օտարերկրյա մի քանի պետությունների դատարանների դատական ակտեր:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Ատենախոսությունում, պայմանավորված հետազոտման կոնկրետ նպատակով ու խնդիրներով, օգտագործվել են ինչպես ընդհանուր հետազոտական՝ դիալեկտիկական, լեզվատրամաբանական ու համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, սինթեզի, անալիզի մեթոդները, այնպես էլ մասնագիտական հատուկ՝ համակարգակառուցվածքային, իրավահամեմատական, ձևական-իրավաբանական մեթոդները, որոնց կիրառմամբ վերլուծվել են ՀՀ ու օտարերկրյա պետությունների՝ հանրային իրավունքի իրավաբանական անձանց գործունեությունն ու դրանց վերաբերող օրենսդրությունը, գիտահետազոտական աշխատանքները, դատական ակտերը, վեր են հանվել այս բնագավառում առկա տեսական և գործնական հիմնախնդիրները, դրանց կարգավորման ուղղությամբ առաջարկվող ընդհանուր լուծումները և այլն:

Հետազոտության գիտական նորությունը: Ատենախոսությունը հայրենական իրավագիտության առաջին համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն է, որտեղ հիմնականում փորձ է արվել հիմնավորել հանրային իրավունքի իրավաբանական անձանց առանձնաց-

ման անհրաժեշտությունը, վեր հանել հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակները, բնորոշ հատկանիշները և հասկացությունը, վեր հանել հանրային իրավունքի իրավաբանական անձանց իրավասույթեկտության առանձնահատկությունները, վեր հանել հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասնակցությամբ քաղաքացիական իրավահարաբերությունների որոշ առանձնահատկություններ, վեր հանել նրանց պատասխանատվությանը վերաբերող իրավակարգավորումների բացերը, վեր հանել ոլորտում առկա օրենսդրական և իրավակիրառ խնդիրներն ու առաջարկել առաջադեմ լուծումներ: Ավելին՝ սույն ատենախոսությամբ հետազոտվել ու բնութագրվել են հանրային իրավունքի իրավաբանական անձանց՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտի առանձնահատկություններին վերաբերող այնպիսի տեսական հասկացություններ ու եզրույթներ, որոնք մինչ այժմ հայտնի չեն եղել հայ իրավագիտական մտքին:

Ընդ որում՝ նկարագրված գիտական ուսումնասիրությունը կատարվել է ռուս, վրացի, ուկրաինացի և եվրոպացի հետազոտողների՝ հանրային իրավունքի իրավաբանական անձանց քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցությանն առնչվող վերջին շրջանի աշխատությունների ու քննարկվող ոլորտում արտասահմանյան փորձի հետազոտման հիման վրա՝ նպատակ ունենալով մշակել դրանցում առկա առաջադեմ գաղափարները ՀՀ-ում ներդնելու ուղիները: Արդյունքում՝ ընդհանրացնելով կատարված ուսումնասիրությունները, արվել են ինչպես տեսական եզրահանգումներ, այնպես էլ ներկայացվել են ՀՀ քաղաքացիական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայում առկա թերությունները շտկելուն ուղղված առաջարկություններ: Ատենախոսության գիտական նորույթն առաջին հերթին դրսևորվում է պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Հանրային իրավունքի իրավաբանական անձանց վերաբերյալ կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձ եզրույթը իր իրավական ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրությունում և որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ սահմանադրական մակարդակում ներկայացված են բացառապես համայնքը և միջհամայնքային միավորումը, իսկ այլ իրավական ակտերի շրջանակներում հանրային իրավունքի իրավաբանական անձի հասկացությունը, տեսակները և հատկանիշները բանաձևված չեն, որպիսի հանգամանքը առաջացնում է ուսումնասիրության շրջանակներում բացահայտված մի շարք գործնական խնդիրներ: Բացի այդ մասնագիտական գրականության մեջ ևս բացակայում է հանրային իրավունքի իրավաբանական անձի հասկացության, տեսակների, հատկանիշների և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանցից դրանց տարանջատման վերաբերյալ միասնական մոտեցումը, ինչը անհրա-

Ժեշտություն է առաջացնում տեսական մակարդակում հստակեցնել վեր նշված խնդիրների կարգավորումը և հետո միայն օրենսդրական մակարդակում կարգավորել բացահայտված խնդիրները:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններում հանրային իրավունքի իրավաբանական անձանց բնականոն մասնակցության ապահովման անհրաժեշտությունը՝ առաջարկվում է հանրային իրավունքի իրավաբանական անձանց տարանջատել մասնավոր իրավունքի իրավաբանական անձանցից, սահմանել քաղաքացիական իրավահարաբերություններին հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասնակցության առանձնահատկությունները և դրանով պայմանավորված փոփոխել քաղաքացիական իրավունքի սուբյեկտների շրջանակը:

Վերը նշված մոտեցումների կիրառումը հնարավորություն կտա վերացնել սահմանադրական մակարդակով ստեղծված ներկայիս իրավական անորոշությունը, ինչպես նաև պարզաբանել որոշ հանրային-իրավական կազմավորումների, մասնավորապես՝ ՀՀ Կենտրոնական բանկի, կենսաթոշակային ֆոնդի, զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի, նոտարական և փաստաբանական պալատների կարգավիճակը, ինչպես նաև հնարավորություն կտա վերացնել պետության նկատմամբ իրավաբանական անձանց վերաբերող ընդհանուր կանոնների կիրառման հետ կապված խնդիրները:

2. Կատարված ուսումնասիրությամբ, հաշվի առնելով մեր կողմից վեր հանված հանրային իրավունքի իրավաբանական անձանց բնորոշ հատկանիշները, տեսական գրականության մեջ արտահայտված կարծիքները, ինչպես նաև մի շարք երկրների փորձը՝ առաջարկվում է տալ հանրային իրավունքի իրավաբանական անձանց հետևյալ բանաձևումը. «Հանրային իրավունքի իրավաբանական անձը համապատասխան նորմատիվ իրավական ակտով կամ դրա հիման վրա հիմնադրված հանրային-իրավական կազմակերպություն է, որն ունի անվանում, ունի իրավունքներ ու պարտականություններ, կրում է պատասխանատվություն իր իրավական ակտերի և գործողությունների համար, ունի հանրային-իշխանական լիազորություններ կամ կապված է հանրային իշխանության հետ և իրականացնում է ֆինանսական, քաղաքական, պետական, սոցիալական, կրթական, մշակութային կամ այլ հանրային գործունեություն»:

3. Մեր կողմից կատարված ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակները հիմնականում ամրագրված են ռոմանդերմանական իրավունքի համակարգի երկրների օրենսդրությունների մեջ, ընդ որում հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակները տարբեր երկրներում տարբեր են, և դրանք ազգային համակարգում ներառելիս չպետք է մեխանիկորեն փոխառել: Յուրա-

քանչյուր երկրի ազգային համակարգ, ելնելով պատմական ավանդույթներից, դոկտրինալ մեկնաբանություններից և օրենսդրի կամքից, կարող է հանդես գալ նշանակալից ինքնուրույնությամբ և չներառել այս կամ այն տեսակի ընդհանուր տեսական իմաստով հանրային իրավունքի իրավաբանական անձը իրավաբանական անձանց շարքում: Արդյունքում՝ հանգել ենք այն եզրակացության, որ ՀՀ-ում հանրային իրավունքի իրավաբանական անձանց ներպետական համակարգը կառուցելիս այդպիսի անձանց շարքին պետք է դասել՝ 1. պետությունը, 2. վարչատարածքային միավորները (համայնք և մարզ), 3. ՀՀ կենտրոնական բանկը, 4. բյուջետային հիմնարկները (պետության և համայնքի բյուջեներից ֆինանսավորվող հիմնարկները)¹, 5. հանրային-իրավական կազմավորումների կողմից ստեղծվող և վերահսկվող ոչ առևտրային կազմակերպությունները (պետական ոչ առևտրային կազմակերպություններ, պետության կամ կենտրոնական բանկի հիմնադրած հիմնադրամներ և այլն) և պարտադիր անդամակցության սկզբունքի հիման վրա գործող ինքնակարգավորվող կազմակերպությունները (մասնագիտական միությունները)²:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ առաջարկում ենք վերանայել քաղաքացիական իրավունքի սուբյեկտների կազմը: Մեր կարծիքով, քաղաքացիական իրավունքի սուբյեկտների այլ «երրորդ տարատեսակ», բացի ֆիզիկական և իրավաբանական անձանցից, գոյություն ունենալ չի կարող, իսկ պետությանը և համայնքը քաղաքացիական իրավունքի հատուկ սուբյեկտ համարելը չի բխում քաղաքացիական իրավունքի սուբյեկտների հավասարության սկզբունքից: Բացի այդ իրավաբանական անձի իրավունքներ ունենալը և իրավաբանական անձ չհանդիսանալը առաջացնում է ներքին հակասություն, որը չի կարելի թույլատրելի համարել: Հանրային իրավունքի իրավաբանական անձը լիարժեքորեն արտահայտում է պետության և համայնքի (որոնք ներկայումս դիտարկվում են որպես հատուկ սուբյեկտ) իրավասուբյեկտության առանձնահատկությունները և հետևաբար առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքում որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ սահմանել միայն ֆիզիկական և իրավաբանական անձանց, միևնույն ժամանակ իրավաբանական անձանց բաժանել երկու տեսակի՝ հանրային իրավունքի և մասնավոր իրավունքի:

4. Պետության՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի և պետական մարմինների փոխհարաբերակցությունը պարզելիս՝ ուսումնասիրության առարկա դարձնելով ՀՀ պետական մարմինների կողմից քաղաքացիական շրջանառությանը մասնակցելու հանգամանքները պետք է փաստել,

¹ Աշխատանքում առաջարկվել է մի շարք կազմակերպություններ դիտարկել որպես հիմնարկներ և դրանց տալ իրավաբանական անձի կարգավիճակ:

² Այս առաջարկը առավել մանրամասն ներկայացված է եզրակացության 3-րդ կետում:

որ ներկայումս ՀՀ պետական մարմինները, չհանդիսանալով քաղաքացիական իրավունքի սուբյեկտ, մի դեպքում մասնակցում են քաղաքացիական շրջանառությանը որպես պետական իշխանության մարմին, ձեռք բերելով և իրականացնելով գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ պետության անունից և պետության համար, մյուս կողմից կորցնում են մարմնի կարգավիճակը և որպես իրավասուբյեկտ իրավաբանական անձ գործում են իրենց անունից իրենց սեփական կարիքները բավարարելու նպատակով:

Արտասահմանյան երկրների՝ պետության և պետական մարմինների փոխհարաբերակցությունը սահմանող օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև գիտական գրականության մեջ առկա տեսական պատկերացումների համակարգային վերլուծության արդյունքներով հանգել ենք այն հետևության, որ պետության և պետական մարմինների փոխհարաբերությունները պետք է կարգավորվեն կոլեկտիվ սուբյեկտի (պետության) կողմից քաղաքացիական շրջանառությանը մասնակցելու հիմնարար սկզբունքի՝ «համակարգի իրավասուբյեկտությունը բացառում է նրա մարմինների իրավասուբյեկտությունը», պահպանմամբ:³

5. Հանրային իրավունքի իրավաբանական անձանց իրավասուբյեկտության առնչությամբ կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորվել է, որ նրանց իրավասուբյեկտությունը, ի տարբերություն մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց իրավասուբյեկտության, որպես կանոն ծագում է հատուկ կարգով (համապատասխան նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու պահից): Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ նրանց իրավասուբյեկտությունը ունի 3 տարր՝ իրավունակություն, գործունակություն և դեյիկտունակություն: Ընդ որում, հանրային իրավունքի իրավաբանական անձանց իրավասուբյեկտության կազմում իրավունակության և գործունակության տարրերի առանձնացումը հիմնավորվում է նրանով, որ հանրային իրավունքի իրավաբանական անձը իրացնում է իր գործունակությունը (իր համար ձեռք է բերում քաղաքացիական իրավունքներ, ստանձնում է քաղաքացիական պարտականություններ) իր մարմինների միջոցով (պետական իշխանության մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ և այլն), որոնք կարող են իրավաբանական անձի հիմնադրման հետ միաժամանակ չկազմավորվել կամ որոշ դեպքերում նաև ժամանակավոր բացակայել: Միևնույն ժամանակ, գիտական և գործնական ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք այն հետևության, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց մոտ գործունակության, որպես իրավասուբյեկտության տարրի, առանձնացումը պայմանավորված է նաև նրանով, որ, որոշ դեպքերում, հանրային իրավունքի իրավաբանական անձի հիմնադիրը ի-

³ Այս առաջարկի հիման վրա ներկայացվել է օրենսդրական փոփոխության առաջարկություն, որն ներկայացված է եզրակացության 4-րդ կետում:

րավունք է ստանում սահմանափակել այն իրավաբանական անձանց գործունակությունը, որոնց ինքնավարությունը և անկախությունը երաշխավորված չէ Սահմանադրությամբ:

6. Կատարված ուսումնասիրությամբ, հաշվի առնելով մեր կողմից վեր հանված հանրային իրավունքի իրավաբանական անձանց բնորոշ հատկանիշները, ուսումնասիրելով արտասահմանյան երկրների օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները պատասխանատվության մասին՝ առաջարկում ենք, սահմանել, որ հանրային իրավունքի իրավաբանական անձինք կրում են ինքնուրույն գույքային պատասխանատվություն, սակայն պետությունը, ինչպես նաև համայնքը պատասխանատու են հանրային իրավունքի իրավաբանական անձանց պարտավորություններով (անգամ այն դեպքում, երբ ազգային օրենսդիրը սահմանում է, որ իրավաբանական անձի հիմադիրը պատասխանատու չէ իրավաբանական անձի պարտավորությունների համար), եթե հանրային իրավական կազմավորումը չի ապացուցի այդ սուբյեկտների ինստիտուցիոնալ և օպերատիվ (գործառության) անկախությունը:⁴

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների տեսական նշանակությունը նախ և առաջ պայմանավորված է նրանով, որ այն ՀՀ-ում հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասնակցությամբ իրավահարաբերությունների հիմնախնդիրների ուսումնասիրությանը նվիրված առաջին համալիր և ամբողջական հետազոտությունն է: Ատենախոսության շրջանակներում արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց առարկան առնչվում է հանրային իրավունքի իրավաբանական անձանց ուսումնասիրությանը: Այս ոլորտի ուսումնասիրության արդյունքները, առաջարկված լուծումներն ու դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ, իրավակիրառ գործունեության ժամանակ և հանրային իրավունքի իրավաբանական անձանց բնույթի և բովանդակության ամբողջական ընկալման, հստակեցման գործընթացում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ԲՈԿ-ի կողմից հաստատված ցուցակում ընդգրկված տարբեր ամսագրերում:

⁴ Այս առաջարկը առավել մանրամասն ներկայացված է եզրակացության 7-րդ կետում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, որոնք ներառում են 9 պարագրաֆ, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը, նպատակը և խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության իրավական, փորձառական, մեթոդոլոգիական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը:

Առաջին գլուխը «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց էությունը» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Հանրային իրավունքի իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները» վերտառությամբ, հեղինակը, հիմք ընդունելով միջազգային իրավական զարգացումներն ու ներպետական օրենսդրական փոփոխությունների հայացակարգային մոտեցումները, ինչպես նաև իրավական կարգավորումները հիմնավորել է հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց տարանջատման անհրաժեշտությունը, միաժամանակ հիմք ընդունելով արտասահմանյան երկրներում հանրային իրավունքի իրավաբանական անձանց օրենսդրական և դոկտրինալ տեսակները, դրանց հատկանիշները, ինչպես նաև տեսության մեջ առկա և օրենսդրական մակարդակով ամրագրված սահմանումները՝ վեր է հանել հանրային իրավունքի իրավաբանական անձանց հատկանիշները և տվել է հանրային իրավունքի իրավաբանական անձի հասկացության բանաձևումը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակներն արտասահմանյան երկրներում» վերտառությամբ, հեղինակը մանրամասն ուսումնասիրել է հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակներն արտասահմանյան երկրների մասնավորապես՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Վենեսուելայի, Ռուսաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի և այլ երկրների օրենսդրությունների ինչպես նաև տեսական գրականության մեջ, որի հաշվառմամբ արձանագրվել է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակները գրեթե բոլոր երկրներում տարբեր են, և դրանք ազգային համակարգում ներառելիս չպետք է մեխանիկորեն փոխառել: Յուրաքանչյուր երկրի ազգային համակարգ, ելնելով պատմական ավանդույթնե-

րից, դոկտրինալ մեկնաբանություններից և օրենսդրի կամքից, կարող է հանդես գալ նշանակալից ինքնուրույնությամբ և չներառել այս կամ այն տեսակի՝ ընդհանուր տեսական իմաստով հանրային իրավաբանական անձը հանրային իրավունքի իրավաբանական անձանց շարքում:

Կատարված ուսումնասիրության արդյունքներով հաջորդ գլխում առանձնացվել են այն կազմավորումները, որոնք առաջարկվել է Հայաստանի Հանրապետությունում դիտարկել որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ:

Երկրորդ գլուխը՝ «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակների դիտարկումը ՀՀ-ում» վերաառությամբ, բաղկացած է հինգ պարագրաֆից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Պետությունը որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ» վերաառությամբ, հեղինակը հանգամանալից վերլուծել է պետության ներկայիս քաղաքացիաիրավական կարգավիճակը և հիմք ընդունելով կատարված ուսումնասիրության արդյունքները՝ հիմնավորել է, որ պետությունը, քաղաքացիական իրավունքի հատուկ սուբյեկտ համարելը չի բխում քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցության հիմնարար սկզբունքի՝ իրավահավասարության պահպանման պահանջից և հետևաբար քաղաքացիական օրենսգրքի՝ իրավաբանական անձանց վերաբերող իրավական նորմերի սուբսիդիար կիրառելիությունը պետության նկատմամբ, որը թույլատրելի է միայն որոշակի դեպքերում, ծառայում է որպես օրենսդրական պահանջ որպես քննարկվող սուբյեկտների նույնականացման անհնարություն՝ պահանջելով իրավակիրառողից նրանց միջև սկզբունքային տարբերությունների հաստատում, որի կառուցակարգը պետք է լինի հենց հանրային իրավունքի իրավաբանական անձը: Միննույն ժամանակ ուսումնասիրության առարկա է դարձվել պետության և պետական մարմինները փոխհարաբերակցության խնդիրը, հիմնավորվել է, որ պետական մարմինները չեն կարող ունենալ իրավասուբյեկտություն և առաջարկվել է փոփոխել ՀՀ օրենսդրության մեջ ներկայումս գործող այն իրավական կարգավորումները, որոնք հիմք են ստեղծում պետական մարմինների իրավասուբյեկտության դրսևորման:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «ՀՀ կենտրոնական բանկը որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ» վերաառությամբ, հեղինակը կատարել է Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև արտասահմանյան պետություններում կենտրոնական բանկի որպես վարչաիշխանական լիազորություններ ունեցող պետական կազմավորման քաղաքացիաիրավական օրենսդրական և դոկտրինալ կարգավիճակի ուսումնասիրություն և առաջարկել է, որ ՀՀ կենտրոնական բանկը դիտարկվի որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի տեսակ:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Վարչատարածքային միավորները որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ» վերտառությամբ, հեղինակը կատարել է վարչատարածքային միավորների քաղաքացիաիրավական կարգավիճակի վերլուծություն և հիմնավորվել է, որ վարչատարածքային միավորները (համայնք և մարզ) հանդիսանում են հանրային իրավունքի իրավաբանական անձի տեսակ:

Երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Բյուջետային հիմնարկները որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ» վերտառությամբ, հեղինակը կատարել է Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան պետություններում հիմնարկների քաղաքացիաիրավական կարգավիճակի վերլուծություն և հիմնավորել է, որ բյուջետային հիմնարկները պետք է դիտարկվեն որպես իրավաբանական անձ և առաջարկել է, որ բյուջետային հիմնարկները դիտարկվեն որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի տեսակ:

Երկրորդ գլխի հինգերորդ պարագրաֆում՝ «ոչ առևտրային կազմակերպությունների որոշ տեսակներ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ» վերտառությամբ, հեղինակը, հիմք ընդունելով միջազգային իրավական զարգացումները և ներպետական օրենսդրական կարգավորումները, տարբերակել է պետական և ոչ պետական ոչ առևտրային կազմավորումները և առաջարկել է, որ պետական և ոչ պետական ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք չեն կազմավորվում կամավորության, անկախության, դիսպոզիտիվության սկզբունքների հիման վրա (ՀՀ նոտարական պալատը, և ՀՀ փաստաբանների պալատը և այլն) դիտարկվեն որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի տեսակ:

Երրորդ գլուխը՝ «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց կողմից քաղաքացիական շրջանառությանը մասնակցելու որոշ ասպեկտներ» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց իրավասուբյեկտությունը և քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցության որոշ առանձնահատկություններ» վերտառությամբ, հեղինակի կողմից ուսումնասիրվել և վերլուծվել են հանրային իրավունք իրավաբանական անձանց իրավասուբյեկտության առանձնահատկությունները մասնավորապես իրավասուբյեկտության կազմը, ծագման պահը և տեսակը: Արդյունքում հիմնավորվել է, որ նրանց իրավասուբյեկտությունը ունի 3 տարր՝ իրավունակություն, գործունակություն և դելիկտունակություն: Հիմնավորվել է, որ վերջիններիս իրավասուբյեկտությունը ծագում է համապատասխան նորմատիվ իրավական ակտի (որի հիման վրա նրանք հիմնադրվում են) ուժի մեջ մտնելու կամ պետական գրանցման պահից, իսկ այն

դեպքերում, երբ հանրային իրավական կազմավորումը որոշակի գործառույթների կատարումը կկայի որևէ մարմնի հետ՝ նրա մոտ այդ մասով գործունակությունը կծագի համապատասխան համապատասխան մարմնին հիմնադրելու պահից: Միաժամանակ հիմնավորվել է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձինք (այդ թվում նաև պետությունը) հանդիսանում են նպատակային կազմակերպություններ և հետևաբար ունեն քաղաքացիաիրավական հատուկ իրավասուրբեկություն:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց քաղաքացիաիրավական պատասխանատվությունը» վերտառությամբ, հեղինակը ուսումնասիրել է հանրային իրավունքի իրավաբանական անձանց պատասխանատվության առանձնահատկությունները և հիմք ընդունելով միջազգային իրավական զարգացումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առաջադեմ մոտեցումները հիմնավորել է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձինք կրում են ինքնուրույն գույքային պատասխանատվություն, սակայն նրանց հիմնադիրները պատասխանատու են իրենց հիմնադրած պետական կազմակերպություն համարվող հանրային իրավունքի իրավաբանական անձանց պարտավորություններով, եթե հանրային իրավական կազմավորումը չի ապացուցի այդ սուրբեկությունների ինստիտուցիոնալ և օպերատիվ (գործառության) անկախությունը:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները.

1. ՀՀ Սահմանադրության 180-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է: Նույնպիսի իրավական կարգավիճակ է տրված նաև միջհամայնքային միավորմանը համաձայն ՀՀ Սահմանադրության 189-րդ հոդվածի 3-րդ մասի: Փաստացի ՀՀ օրենսդրությունը դե ֆակտո ճանաչում է հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիան որպես իրավաբանական անձի տեսակ: Թե ինչ է իրենից ներկայացնում հանրային իրավունքի իրավաբանական անձը, ինչպես է հարաբերվում մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց հետ, արդյոք այդ անձինք ընդամենը երկուսն են, թե առնվազն երկուսն են, Սահմանադրությունը չի բովանդակում այս հարցերի պատասխանները և, կարծում ենք, նման հարցերի կարգավորումը Սահմանադրության շրջանակներում ինքնին կլինեք առարկայագուրկ: Այնուամենայնիվ, վերը նշված հարցերի պատասխանները պետք է արտացոլվեն ՀՀ օրենսդրության մեջ՝ առաջին հերթին դեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով, ըստ որի՝ նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրաժանող հասկացություններ կամ տերմիններ: Եթե նորմատիվ իրավական ակտում

օգտագործվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, կամ այլ նորմատիվ ակտով տրված է այդ հասկացությունների կամ տերմինների այլ սահմանում, ապա տվյալ ակտով տրվում են այդ ակտի էությունից բխող դրանց սահմանումները: Սահմանումները պետք է լինեն այնպիսին, որ ապահովեն դրանց միատեսակ ու միանշանակ ընկալումն ու կիրառումը:

Ակնհայտ է, որ վերը նշված նորմների մեկնաբանությունից արդեն իսկ բխում է, որ օրենսդրական մակարդակով պետք է սահմանվի հանրային իրավունքի իրավաբանական անձանց հասկացությունը, դրա տեսակները, կազմավորման և գործունեության առանձնահատկությունները և այլ կողմնորոշիչները:

Բացի այդ, հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիայի դե յուրե փոխառումը հնարավորություն կտա կանոնակարգել այն իրավաբանական անձանց իրավական կարգավիճակը, որոնք ներկայումս չեն տեղավորվում քաղաքացիագետների կողմից մշակված իրավաբանական անձի հասկացության շրջանակներում, ինչպես նաև ավելի որոշակի բնորոշել իրավաբանական անձանց քաղաքացիական կարգավիճակը, որոնք իրականացնում են պետական և մունիցիպալ գույքի կառավարման ֆունկցիաներ:

2. Կատարված իրավահամեմատական-վերլուծական աշխատանքի արդյունքում, հաշվի առնելով նաև հանրային իրավունքի իրավաբանական անձի մեր կողմից առաջարկված սահմանումը, մեր կարծիքով «հանրային իրավունքի իրավաբանական անձի» հասկացության հիմնական հատկանիշներն են՝

1) Համապատասխան նորմատիվ իրավական ակտով կամ դրա հիման վրա հիմնադրված լինելը, որն ենթադրում է, որ այս իրավաբանական անձինք ստեղծվում են հատուկ կարգով՝ հանրային իշխանության մարմնի կողմից ընդունված օրենքով կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով կամ դրանց հիման վրա,

2) Այն բնորոշվում է որպես հանրային-իրավական կազմակերպություն, քանի որ «հանրային իրավունքի իրավաբանական անձը» իրենից ներկայացնում է ոչ թե մասնավոր-իրավական, այլ հանրային-իրավական կազմավորում. նրա նշանակությունը, հանրության մեջ դերը և գործառնությունները տարբեր են մասնավոր իրավունքի իրավաբանական անձանցից: Հանրային իրավունքի իրավաբանական անձի իրավական կարգավիճակը որոշվում է ոչ թե մասնավոր իրավունքի իրավական ակտերով, այլ հանրային իրավունքի նորմատիվ իրավական ակտերով, Այն բնորոշվում է որպես կազմակերպություն, որից բխում է, որ այն ունի կազմակերպական միասնություն, որն արտահայտվում է որոշակի ներքին

կայուն կառուցվածք ունենալու, միասնական կամքի և նպատակի առկայության մեջ,

3) Անվանում, իրավունքներ ու պարտականություններ ունենալու և պատասխանատվություն կրելու հնարավորությունից բխում է, որ այն օժտված է իրավասուբյեկտությամբ,

4) Հանրային-իշխանական լիազորություններ (օրինակ որոշումների ընդունում, որոնք պարտադիր են այլ անձանց համար), կամ հանրային իշխանության հետ կապ ունենալու հատկանիշից բխում է, որ այդպիսիք են հանդիսանում նախ և առաջ պետությունը, մունիցիպալ կազմավորումները, կենտրոնական բանկը և նրանք, որոնք իշխանական լիազորություններ չունեն, սակայն թեկուզ և տարբեր մակարդակներով կապված են հանրային իշխանության հետ,

5) Ֆինանսական, քաղաքական, պետական, սոցիալական, կրթական, մշակութային կամ այլ հանրային գործունեություն իրականացնելու հատկանիշը ընդգծում է, որ այս իրավաբանական անձինք սկզբունքորեն տարբերվում են մասնավոր իրավունքի իրավաբանական անձանցից, որոնք ունեն մասնավոր շահեր, որոնց մեծ մասի նպատակն է տնտեսական գործունեությամբ զբաղվելը: Հանրային իրավունքի իրավաբանական անձինք իրենց գործունեությունը ծավալում են նպատակ ունենալով բավարարել ընդհանուր հասարակական հանրային շահերը:

3. ՀՀ օրենսդրության մեջ ամրագրված լինելով «Հանրային իրավունքի իրավաբանական անձ» կատեգորիան, այդպիսի կարգավիճակ է վերապահվել միայն համայնքներին և միջհամայնքային միավորումներին: Բնական է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիան չի կարող սահմանափակվել միայն վերոթվարկյալ անձանցով: ՀՀ օրենսդրության մեջ հանրային իրավունքի իրավաբանական անձանց կատեգորիայի դե յուրե ամրագրումը պետք է հանգեցնի նաև նրանց տեսակների առավել ամբողջական սահմանմանը, որի տարատեսակ, ըստ մեզ, պետք է հանդիսանա

1) Պետությունը, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածից բխում է, որ իրավաբանական անձանց վերաբերող իրավական նորմերի սուբսիդիար կիրառելիությունը, որը թույլատրելի է միայն որոշակի դեպքերում, ծառայում է որպես օրենսդրական պահանջ որպես քննարկվող սուբյեկտների նույնականացման անհնարություն՝ պահանջելով իրավակիրառողից նրանց միջև սկզբունքային տարբերությունների հաստատում, որի կառուցակարգը պետք է լինի հենց հանրային իրավունքի իրավաբանական անձը:

Պետությանը՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի, բնորոշ են հետևյալ հատկանիշները՝ 1. ցանկացած պետության հիմնադրման և գործունեության նպատակն է երկրի ժողովրդի ընդհանուր շահերի

բավարարումը, այսինքն պետությունը իրականացնում է հանրային գործառնություններ, 2. պետությունը և նրա մարմիններն ունեն իշխանական լիազորություններ, 3. այն հանդիսանում է հանրային և մասնավոր բնույթի իրավունքների և պարտականությունների կրող, օժտված է իրավասուլեկտությամբ 4. ունի գույքային հիմք՝ պետական սեփականություն, 5. հիմնադրվում և լուծարվում է հատուկ կարգով, 6. մասնակցում է քաղաքացիական շրջանառությանը այլ սուբյեկտների հետ հավասարության հիմունքներով:

2) ՀՀ կենտրոնական բանկը, քանի որ այն հիմնադրվում է հատուկ կարգով, իրականացնում է հանրային իրավական գործառնություններ (իրականացնում է պետության դրամավարային քաղաքականությունը) և ունի վարչաիշխանական լիազորություններ, ունի հանրային իրավասուլեկտություն, ինչպես նաև մասնակցում է քաղաքացիաիրավական հարաբերություններում (ընդ որում մասնակցում է իր անունից և անգամ կրում է ինքնուրույն գույքային պատասխանատվություն, այսինքն ունի նաև քաղաքացիական իրավասուլեկտություն) որպես իրավաբանական անձ (ընդ որում իրավաբանական անձ, որը չի բխում իրավաբանական անձի մասնավոր իրավական ընկալումից):

3) Վարչատարածքային միավորները. Ճիշտ է դրանցից որոշները (համայնք և միջհամայնքային միավորում) արդեն իսկ օրենսդրության մակարդակով սահմանված են որպես այդպիսին, սակայն համանման կարգավիճակ պետք է վերապահվի նաև մարզերին, քանի որ մարզը ՀՀ-ում համարվում է վարչատարածքային բաժանման կարևորագույն միավորներից մեկը և ներկայումս վերջինս, չհանդիսանալով քաղաքացիական իրավունքի սուբյեկտ, անօրինական մասնակցում է քաղաքացիական շրջանառությանը:

4) Բյուջետային հիմնարկները (պետության կամ համայնքի կողմից հիմնադրված), քանի որ վերջիններս այլ կազմակերպաիրավական ձև են, քան պետական կամ մունիցիպալ մարմինները և գործում են այլ մեթոդներով: Ի տարբերություն պետական կամ համայնքային մարմինների՝ վերոնշյալ հիմնարկները իրավունք չունեն հրապարակել ընդհանուր կիրառելիության ենթակա նորմատիվ իրավական ակտեր: Նրանք հանդիսանում են լոկ ալդպիսի իրավական ակտեր կիրառողներ: Պետական և համայնքային հիմնարկների, որպես ոչ առևտրային կազմակերպությունների, գործունեության հիմնական ուղղությունը իրենց կողմից աշխատանքների կատարումն է կամ պետական (համայնքային) ծառայությունների մատուցումն է տարբեր սոցիալական ոլորտներում՝ նպատակ ունենալով ապահովել պետական կամ մունիցիպալ մարմինների գործառնությունների իրականացումը, որի արդյունավետ իրացման գրավականը նրանց իրավաբանական անձի կարգավիճակ տրամադրելն է: Ընդ որում

կատարված ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ ՀՀ օրենսդրությունը պետության կամ համայնքի կողմից հիմադրած հիմնարկները չհամարելով իրավաբանական անձ, կամա թե ակամա, իրավական առումով նրանց հավասարեցնում է իրավաբանական անձանց՝ ընդունելով, որ նրանք կարող են ունենալ իրենց սեփական կարիքները (իրավասույթեկություն) և դրանով պայմանավորված նրանք գործարքներ են կնքում իրենց անունից և ի շահ իրենց:

4.1) 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ վերացվել են ՀՀ-ում լայն տարածում ստացած պետական կառավարչական հիմնարկները և ներկայումս պետական մարմինն իր իրավասության սահմաններում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ է ձեռք բերում և իրականացնում գլխավոր քարտուղարի միջոցով: Սակայն, քննարկվող օրենքի իրավակարգավորումների համատեքստում այժմ շարունակում են գործունեություն ծավալել համայնքային կառավարչական հիմնարկները, որոնց գոյության նպատակահարմարությունը մեզ կասկածելի է թվում պայմանավորված նրանով, որ ներկայումս ստացվել է այնպես, որ օրենսդրի կողմից 2 համանման կոլեկտիվ սուբյեկտների պարագայում ցուցաբերվել է տարբերակված մոտեցում այն էլ այն դեպքում, երբ համայնքային կառավարչական հիմնարկները մասնակցում են քաղաքացիական հարաբերություններին անտրամաբանական եղանակով: Ներկայումս համայնքը քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցում է իր մարմինների համայնքի ղեկավարի ու ավագանու միջոցով իսկ վերջիններս էլ մասնակցում են պետական կառավարչական հիմնարկ հանդիսացող աշխատակազմի միջոցով: Այսինքն մարմինը, այլ ոչ թե համայնքը մասնակցում է քաղացիական շրջանառությանը մեկ այլ կազմավորման միջոցով: Մեր կարծիքով, միասնական մոտեցում ցուցաբերելու, ինչպես նաև նշված անորոշությունը վերացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված, պետք է պետական կառավարչական հիմնարկների համանմանությամբ վերացնել նաև համայնքային կառավարչական հիմնարկները և սահմանել, որ համայնքը քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցում է գլխավոր քարտուղարի միջոցով:

5) Հանրային-իրավական կազմավորումների կողմից ստեղծվող և վերահսկվող ոչ առևտրային կազմակերպությունները (պետական ոչ առևտրային կազմակերպություններ, պետության կամ կենտրոնական բանկի կողմից հիմնադրված հիմնադրամներ և այլն), ինչպես նաև պարտադիր անդամակցության սկզբունքի հիման վրա գործող ինքնակարգավորվող կազմակերպությունները (մասնագիտական միություններ), քանի որ

կատարված ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ պետության կամ համայնքի կողմից առանձին իրավական ակտերի հիման վրա ստեղծված ոչ առևտրային կազմակերպությունները, ինչպես նաև մասնագիտական միությունները, որոնք չեն հիմնադրվում կամավորության, անկախության և դիսպոզիտիվության սկզբունքների հիման վրա չեն կարող նույնացվել մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց հետ և պետք է դասվեն հանրային իրավունքի իրավաբանական անձանց շարքում:

4. Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 129-րդ հոդվածը պետական մարմինների ինքնուրույն իրավասությունները չի ճանաչում, այնուամենայնիվ գլխավոր քարտուղարի միջոցով ներկայումս պետական մարմինները ձեռք են բերում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ ոչ միայն պետության անունից և պետության համար, այլ նաև իրենց անունից իրենց սեփական կարիքները բավարարելու համար: Հետևաբար առաջարկում ենք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում կատարել փոփոխություն և սահմանել, որ «Օրենքի իմաստով պատվիրատու է հանդես գալիս՝ պետությունը և համայնքը, պետության կամ համայնքների հիմնարկները (...)», միևնույն ժամանակ կատարել փոփոխություն «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ կետում և սահմանել, որ «պետության կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով»:

Նշված փոփոխությունների արդյունքում կվերացվի պետական մարմինների իրավասությունների հնարավորությունները:

5. Հիմք ընդունելով եվրոպական երկրների փորձը՝ հանրային իրավունքի իրավաբանական անձանց կազմակերպաիրավական ձևեր կարող են հանդիսանալ **կորպորացիան, հիմնարկը, հիմնադրամը:**

6. Վերլուծելով հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասնավոր իրավական իրավասությունները, պարզել ենք, որ գիտական գրականության մեջ պետության՝ որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի, իրավասությունների կապակցությամբ առկա են տարբեր մոտեցումներ. որոշները բնորոշում են այն որպես հատուկ, որոշները՝ ունիվերսալ: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզել ենք, որ հանրային իրավունքի իրավաբանական անձինք (այդ թվում նաև պետությունը) ունեն քաղաքացիաիրավական հատուկ իրավասություններ, այսինքն, մասնակցում են քաղաքացիական շրջանառությանը որոշակի սահմաններում կոնկրետ նպատակների հասնելու համար, ընդ որում այլ սուբյեկտների հետ հավասարության հիմունքներով և այդ շրջանակներում չեն կարող գործածել իրենց իշխանական լիազորությունները:

7. Արտասահմանյան օրենսդրության, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներին համապատասխան պետք է արձանագրել, որ հանրային իրավունքի իրավաբանական անձինք կրում են ինքնուրույն գույքային պատասխանատվություն, սակայն նրանց հիմնադիրները պատասխանատու են իրենց հիմնադրած պետական կազմակերպություն համարվող հանրային իրավունքի իրավաբանական անձանց պարտավորություններով, եթե հանրային իրավական կազմավորումը չի ապացուցի այդ սուբյեկտների ինստիտուցիոնալ և օպերատիվ (գործառության) անկախությունը:

Պարզելու համար, թե արդյոք կազմակերպությունը ունի ինստիտուցիոնալ կամ գործառության անկախություն, որպես կանոն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաշվի է առնում հետևյալ հանգամանքները, որոնցից ոչ մեկը առանձին որոշիչ չէ՝

- 1) կազմակերպության իրավական կարգավիճակը. կազմակերպությունը գործում է հանրային, թե՛ մասնավոր իրավունքի ներքո, կամ արդյո՞ք կազմակերպությունը պետական մարմին է,
- 2) կազմակերպության գործունեության բնույթը և ոլորտը. կազմակերպությունը իրականացնում է հանրային գործառույթնե՞ր, թե՛ սովորական առևտրային գործունեություն, արդյո՞ք գործունեություն է իրականացնում մենաշնորհային կամ պետական խիստ կարգավորման ոլորտում,
- 3) կազմակերպության ինստիտուցիոնալ անկախությունը (պետական սեփականության չափը). ինչպիսի՞ն է կազմակերպության ֆինանսավորման աղբյուրը, որքա՞ն է իշխանության մարմինների մասնակցությունը դրա կանոնադրական կապիտալի մեջ, արդյո՞ք կազմակերպությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից, արդյո՞ք պետությունը կարող է գույքը փոխանցել այլ կազմակերպության,
- 4) կազմակերպության գործառության անկախությունը (պետության կողմից հսկողության և վերահսկողության չափը) արդյո՞ք պետությունն է հիմնադրում, լուծարում և վերակազմակերպում ընկերությունը, արդյո՞ք պետությունն է ղեկավարում կամ վերահսկում տվյալ ընկերությունը, ինչպե՞ս է իրականացվում կազմակերպության ղեկավարումը (արդյո՞ք կառավարման մարմինները նշանակվում են պետության կողմից), որքա՞նով են կառավարման մարմինները անկախ իրենց գործունեության մեջ, կազմակերպությունը հաշվետու է արդյո՞ք պետական մարմին, արդյո՞ք պետությունը հաստատում է ընկերության կնքած գործարքները, արդյո՞ք պետությանն է փոխանցվում տվյալ ընկերության ղեկավարումը երբ ընկերությունը սնանկ է ճանաչվում, լուծարման դեպքում արդյո՞ք պետությանն է անցնում գույքը:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. «Հանրային իրավունքի իրավաբանական անձի» հասկացությունը, Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագիր, նոյեմբեր-դեկտեմբեր, 2017, 11-12 (221-222), էջեր 58-65

2. «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց» հիմնական տեսակներն արտասահմանյան երկրներում, Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագիր, սեպտեմբեր-հոկտեմբեր, 2017, 9-10 (219-220), էջեր 13-20

3. «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց քաղաքացիաիրավական իրավասույթելությունը», Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագիր, նոյեմբեր-դեկտեմբեր, 2017, 11-12 (221-222), էջեր 23-31

4. «Հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց տարանջատման անհրաժեշտությունը», Պետություն և իրավունք գիտամեթոդական ամսագիր, N1 (83), Երևան, 2019, էջեր 82-88

5. «Պետությունը որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ», Օրինականություն ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, N111, 2019, էջեր 58-63

6. «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց քաղաքացիաիրավական պատասխանատվությունը», Բանբեր Երևանի համալսարանի, իրավագիտություն, Հտ. 10 Հմր. 1 (28) (2019) էջեր 40-47

7. «Պետությունը և վարչատարածքային միավորները որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ», Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագիր, հունվար-մարտ, 2025, 1-3/307-309, էջեր 58-70

8. «ՀՀ կենտրոնական բանկը, հիմնարկները և որոշ ոչ առևտրային կազմակերպություններ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ», Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագիր, ապրիլ-հունիս, 2025, 4-6/310-312, էջեր 34-47

АМИРХАНИЯН СИРО ГРАЧОВИЧ
ЮРИДИЧЕСКИЕ ЛИЦА ПУБЛИЧНОГО ПРАВА КАК СУБЪЕКТ
ГРАЖДАНСКОГО ПРАВА
РЕЗЮМЕ

На современном этапе развития общества, обусловленном рыночными отношениями, значительное внимание уделяется рассмотрению частных правоотношений и защите частных интересов. Однако наряду с этим не менее важное и большое значение имеет исследование участия государства и общины, а также учреждённых ими юридических лиц в гражданско-правовых отношениях, а также поиск эффективных решений существующих в этой сфере фундаментальных проблем.

Согласно части 2 статьи 180 Конституции РА, община признаётся «юридическим лицом публичного права». Аналогичный правовой статус, в соответствии с частью 3 статьи 189 Конституции, предоставлен и межобщинному объединению.

В связи с этим в кратких комментариях к Конституции РА в редакции 2015 года справедливо отмечено, что «Конституция впервые вводит совершенно новое понятие, цель которого — уточнить, что правовой статус юридических лиц в сфере публичной власти в определённой степени отличается от статуса юридических лиц, предусмотренных в частном праве. Подобное регулирование впоследствии позволит законодательно развить сущность нового правового института и обеспечить, чтобы в публичном праве термин “юридическое лицо” не отождествлялся с одноимённым понятием, используемым в частном праве, что могло бы стать причиной нежелательной путаницы».

Таким образом, можно отметить, что законодательство РА де-факто признаёт категорию юридического лица публичного права как разновидность юридического лица. Однако Конституция не раскрывает, что именно представляет собой юридическое лицо публичного права, как оно соотносится с юридическими лицами частного права, и ограничивается ли круг таких субъектов двумя видами, либо включает более широкую категорию. По нашему мнению, регулирование подобных вопросов в рамках самой Конституции было бы нецелесообразным. Вместе с тем следует подчеркнуть, что ответы на указанные вопросы должны быть отражены в законодательстве РА, а также в научной литературе.

Следует отметить, что до конституционных изменений 2015 года в правовой системе РА находилась в обращении концепция внесения изменений в главу 5 Гражданского кодекса, посвящённую юридическим лицам. В данной концепции указывалось, что совершенствованию гражданского

законодательства будет способствовать классификация юридических лиц на публичные и частные. В соответствии с этим был разработан проект Закона РА «О внесении изменений и дополнений в Гражданский кодекс Республики Армения» с целью закрепления в нём новой категории — юридических лиц публичного права.

В настоящее время концепция внесения изменений в главу 5 Гражданского кодекса РА и основанный на ней законопроект «О внесении изменений и дополнений в Гражданский кодекс РА» были сняты с рассмотрения, поскольку, несмотря на то, что необходимость разграничения юридических лиц публичного и частного права вытекает из конституционно-правовых положений РА и международной практики, указанные документы не раскрыли в полной мере необходимость такого разграничения, характерные черты и виды юридических лиц публичного права, а также обусловленные этим особенности их правового статуса.

Несмотря на существование законодательных механизмов и необходимость проведения масштабных исследований, деятельность юридических лиц публичного права как особых субъектов гражданских правоотношений, а также возникающие в связи с этим проблемы в Армении до настоящего времени не получили всестороннего теоретического осмысления и научного анализа, что объясняется острой нехваткой исследований в данной области.

В результате, по нашему мнению, в контексте конституционных изменений РА фундаментальный вопрос о юридическом разграничении публичного и частного права приобрёл новое значение, что делает неизбежной необходимость внесения изменений и дополнений в Гражданский кодекс РА, а также в ряд других правовых актов.

Важность вышеуказанных проблем и необходимость их решения обуславливают актуальность настоящего исследования.

В рамках диссертации автор на основании системного анализа выраженных в теории мнений, законодательства РА, международных правовых регулирований, законодательства зарубежных стран, судебной практики впервые в отечественной юриспруденции делает предметом обсуждения и всесторонне анализирует проблемы связанные с гражданско-правовым статусом юридических лиц публичного права.

В результате указанного были сделаны как теоретические обобщения, так и предложение научно-практического характера. Диссертация имеет не только теоретическое, но и практическое значение, так как имеющиеся в диссертации предложения, анализы могут быть использованы для усовершенствования законодательства и правоприменительной практики.

SIRO HRACH AMIRKHANYAN
LEGAL ENTITIES OF PUBLIC LAW AS SUBJECTS OF CIVIL LAW

SUMMARY

At the current stage of societal development, conditioned by market relations, significant attention is given to the examination of private legal relations and private interests. However, along with them, it is equally important to study civil legal relations involving the state or community, as well as legal entities established by them, and to explore effective solutions to the fundamental issues arising in this context.

Pursuant to Part 2 of Article 180 of the Constitution of the RA, a community is defined as a legal entity under public law. Under Part 3 of Article 189 of the Constitution, the same legal status is conferred upon intercommunity unions. In this regard, the brief commentary to the 2015 edition of the Constitution of the RA rightly notes that “for the first time, the Constitution introduces an entirely new concept, the purpose of which is to clarify that the legal status of legal entities in the sphere of public authority differs in certain respects from that of legal entities under private law. Such a provision allows for the future legislative development of this new legal institution and helps to prevent confusion between the term ‘legal entity’ as used in public law and the same term as used in private law.”

Thus, it can be stated that the legislation of the RA de facto recognizes the category of legal entities under public law as a type of legal entity. However, questions remain as to what precisely constitutes a legal entity under public law, how such entities relate to legal entities under private law, and whether there are only two such entities or at least two, since the Constitution itself does not provide explicit answers to these questions. We believe that regulating such matters within the framework of the Constitution itself would be conceptually inappropriate. Nevertheless, the answers to these questions must be reflected in the legislation of the RA as well as in the scientific legal literature.

It should be noted that prior to the 2015 constitutional amendments, the draft concept on amendments to Chapter 5 of the Civil Code of the RA—pertaining to legal entities—was in circulation within the Armenian legal system. That concept stated that the improvement of civil legislation would be promoted by the classification of legal entities into public and private types. To implement this objective, a draft law of the RA “On Amendments and Additions to the Civil Code of the Republic of Armenia” was developed, which envisaged the inclusion of legal entities under public law as a new category in the Civil Code.

However, the above-mentioned concept and the corresponding draft law were later withdrawn from circulation. Although the differentiation between legal

entities under public law and legal entities under private law stems from the constitutional framework of the RA and international practice, the draft concept and the proposed amendments did not fully reveal the necessity for such differentiation, nor did they sufficiently define the essential characteristics, types, and distinctive features of legal entities under public law.

Despite the evident need for comprehensive studies—conditioned by the limited legislative mechanisms and the current discrepancies in their application—the functioning of legal entities under public law as distinct subjects of civil legal relations, as well as the fundamental issues arising from their activities, have not yet been thoroughly examined or explained in Armenia, including at the theoretical level. This is largely due to the scarcity of academic research devoted to this field.

As a result, we conclude that, in the context of the constitutional amendments of the RA, the issue of the *de jure* differentiation between legal entities under public law and those under private law has risen to a new level of significance. Consequently, amendments and additions to the Civil Code of the RA, as well as to a number of other legal acts, have become indispensable.

The importance of the indicated issues and the need to address them determine the relevance of this study.

In the scope of the dissertation, the author, for the first time in native jurisprudence, on the basis of the systematic analysis of the views expressed in the theory, the legislation of the Republic of Armenia, the international legal regulations, the legislation of foreign countries, judicial practice, makes the subject of discussion and comprehensively analyzes the problems related to the civil status of legal entities of public law.

As a result, both theoretical generalizations and scientific-practical suggestions were made. The dissertation has not only theoretical but also practical significance as the suggestions and analyzes available in the dissertation can be used to improve the legislation and law enforcement practice.